Արմավիրի մարզի <<Մերձավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Հաստատում եմ

Տնօրեն՝ Զ.Ստեփանյան

Թեմատիկ պլանավորում

2022-2023 ուստարի

Տարեկան

Առարկան Համաշխարհային գրականություն

Դասարան IX

Ժամաքանակ 34 ժամ

Ուսուցիչ Լիլիթի Սարգսյան

Պահպանված է ուսպլանով նախատեսված ժամաքանակը

Փոխտնօրեն՝ Է.Թորոսյան

Համապատասխանում է պետական չափորոշիչին և ծրագրին

Մ/մ նախագահ՝ Վ.Սարգսյան

Թեմատիկ պլանավորում
«Համաշխարհային պատմություն»

9-րդ դասարան

Շաբաթական 1 ժամ

Տարեկան 34 ժամ

Դասագրքի հեղինակներ՝ Ա.Ստեփանյան, Ա.Նազարյան,

Ռ. Սաֆրաստյան,,,Զանգակ,,2019)

Թեմա	**Բաժին 1. Աշխարհը Արդյունաբերական Հասարակության երրորդ շրջափուլում**
Նպատակ	Իմանալ Վերսալյան պայմանագիրը ստորագրած երկրների, այդ դարաշրջանի նշանավոր ռազմաքաղաքական և մշակութային գործիչների, Երկրորդ աշխարհամարտի մասնակից պետությունների և կարևոր ճակատամարտերի, Երկրորդ աշխարհամարտի հիմնական փուլերի, ռազմաքաղաքական գործիչների մասին, Փարիզի վեհաժողովի, ստորագրված պայմանագրերի, Վերսալ-վաշինգտոնյան համակարգի, Ժողովրդավարական ու ավանդական հասարակությունների, տնտեսական մեծ ճգնաժամի, 1920-1930-ական թթ. միջազգային հարաբերությունների առանձնահատկությունների, Երկրորդ աշխարհամարտի պատճառների, ընթացքի ու արդյունքների մասին, Վերսալ-վաշինգտոնյան պայմանագրերի, տնտեսական մեծ ճգնաժամի հաղթահարման ուղիների, 1920-1930-ական թթ. մշակույթի տարբեր բնագավառներումկատարված նվաճումների, Երկրորդ աշխարհամարտի ռազմաքաղաքական արդյունքները:
Վերջնարդյունքներ	Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ Վերսալյան պայմանագիրը ստորագրած երկրներ, Երկրորդ աշխարհամարտի մասնակից մեծ պետություններ և կարևոր ճակատամարտեր, բնութագրել այդ դարաշրջանի նշանավոր ռազմաքաղաքական և մշակութային գործիչների, ժամանակագրական հաջորդականությամբ թվարկել համաշխարհային կարևոր նշանակություն ունեցող իրադարձություններ, ներկայացնել և վերլուծել հաշտության պայմանագրերի բովանդակությունը, պարզաբանել Ազերի լիգայի ստեղծման նպատակը, գործառույթները, ֆաշիզմի էությունը և դրա ի հայտ գալուն նպաստող պայմանները, տնտեսական ճգնաժամի հետևանքները, քեմալական շարժման էությունը, բացատրել ագրեսիա, ինտերվենցիա, ստատուս-քվո, «Նոր կուրս», կուլակ, ռևանշ հասկացությունների և «Տարօրինակ պատերազմ», «Կայծակնային պատերազմ», «Երկրորդ ճակատ» արտահայտությունների իմաստը, քննարկել Երկրորդ աշխարհամարտի պատճառները և հետևանքները, բացատրել և հիմնավորել Գերմանիայի սկզբնական հաջողությունների պատճառները, պարզաբանել 1920-1930-ական թթ. Միջազգային հարաբերությունների գլխավոր հիմնահարցերը, համեմատել համաշխարհային երկու պատերազմների պատճառները, հակամարտող

		ուժերի կազմն ու ծրագրերը:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/1/	3-6	Ներածություն
1/2/	8-17	Դաս 1-2. Փարիզի վեհաժողովը և նոր աշխարհակարգը:Ազգերի լիգան
1/3/	19-23	Դաս 3. Արևմտյան ժողովրդավարական հասարակությունները 1920-ական թվականներին
1/4/	24-28	Դաս 4. Ժողովրդավարական հասարակությունները և Տնտեսական մեծ ճգնաժամը
1/5/	29-33	Դաս 5. Ամբողջատիրական վարչակարգը Եվրոպայում
1/6/	35-40	Դաս 6. Խորհրդային Միությունը 1922-1939 թվականներին
1/7/		Թեմատիկ գրավոր աշխատանք
1/8/	41-45	Դաս 7. Արևելքի ավանդական հասարակությունների արդիականացման միտումները
1/9/	46-50	Դաս 8. Հեռավոր Արևելքի և Հնդկաստանի ավանդական հասարակությունները
1/10/	51-55	Դաս 9. Մշակույթը 1920-1930-ական թվականներին
1/11/	56-60	Դաս 10. Միջազգային հարաբերությունները 1920-1930-ական թվականներին
1/12/	62-66	Դաս 11. Երկրորդ աշխարհամարտը. Առաջին շրջափուլը
1/13/	67-73	Դաս 12. Երկրորդ աշխարհամարտը
1/14/		Գործնական աշխատանք
1/15/		**Կրկնություն**
Թեմա		**Բաժին 2. Աշխարհը Սառը պատերազմի ժամանակաշրջանում**
Նպատակ		Իմանալ 1945-1991 թթ. միջազգային հարաբերությունների, գաղութային համակարգի փլուզման մասին, ՄԱԿ-ի ստեղծման, ԽՍՀՄ ղեկավարների, հետպատերազմյան ժամանակաշրջանի նշանավոր ռազմաքաղաքական գործիչների մասին, նոր միջազգային-իրավական համակարգի ձևավորման, երկբևեռ աշխարհի ձևավորման, տնտեսական մրցակցության պատճառները, հետևանքներն ու առանձնահատկությունները, ՄԱԿ-ի ստեղծման նպատակը, խնդիրները, գործառույթները, միջազգային հարաբերություններում դրսևորված փոփոխությունները, տարածաշրջանային պատերազմների ու հակամարտությունների մասին, գաղութային համակարգի փլուզման պատճառների, երրորդ աշխարհի ձևավորման, Արևելքի երկրների զարգացման առանձնահատկությունների մասին:
Վերջնարդյունքներ		Թվարկել և բնութագրել նշանավոր ռազմաքաղաքական գործիչների, ժամանակագրական հաջորդականությամբ ներկայացնել համաշխարհային կարևոր նշանակություն ունեցող իրադարձություններ, քարտեզի վրա ցույց տալ աշխարհի խոշոր տերությունները, ներկայացնել ՄԱԿ-ի ստեղծման անհրաժեշտությունը, նպատակը, խնդիրները, գործառույթերը, ՆԱՏՕ-ի և Վարշավյան դաշինքի ստեղծման պատճառները և դրանց գործունեությունը, Անհատի պաշտամունքի դատապարտման պատմական նշանակությունը, Վերակառուցման քաղաքականությունը, բացատրել «Ձնհալ», «Վերակառուցում», համադաշնություն, ՆԱՏՕ, ԱՊՀ, «Մարշալի պլան» հասկացությունների և արտահայտությունների իմաստը, վերլուծել Սառը պատերազմի պատճառները և դրա դրսևորման ձևերը, համեմատել աշխարհի

		զարգացած երկրները, երրորդ աշխարհի, Արևելքի երկրների տնտեսությունն ու քաղաքականությունը, վեր հանել « Ցնհալի տարիների» և «Լճացման շրջանի» ԽՍՀՄ-ի ներքին ու արտաքին քաղաքականության բնորոշ գծերը, հիմնավորել, թե արդյո՞ք անխուսափելի էր ԽՍՀՄ-ի փլուզումը, քննարկել և մեկնաբանել, թե ինչու ԱՄՆ-ը դարձավ միակ գերտերությունը:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/16/	80-84	Դաս 13. Սառը պատերազմը
1/17/	85-89	Դաս 14. Արևմուտքի երկրները1945-1980-ական թվականներին
1/18/	90-94	Դաս 15. ԽՍՀՄ-ը 1945-1985 թվականներին
1/19/	95-99	Դաս 16. Վերակառուցումից դեպի փլուզում
1/20/	101-106	Դաս 17. Սոցիալիստական համակարգը
1/21/		Գործնական աշխատանք
1/22/	107-110	Դաս 18. Երրորդ աշխարհը
1/23/	112-117	Դաս 19. Մերձավոր և Միջին Արևելքի երկրները
1/24/	118-122	Դաս 20. Արդիականացող Արևելքը
1/25/	123-127	Դաս 21. Միջազգային հարաբերությունները «Սառը պատերազմի» տարիներին
1/26/		Թեմատիկ գրավոր աշխատանք
Թեմա		**Բաժին 3. Աշխարհը արդի փուլում**
Նպատակ		Իմանալ Սառը պատերազմի ավարտից հետո աշխարհի խոշոր պետությունների զարգացման, միջազգային հարաբերություններում նկատված փոփոխությունների, արդի համաշխարհային խնդիրների, համաշխարհային մշակույթի կարևորագույն նվաճումների մասին, Արևմուտքի, հետխորհրդային երկրների զարգացման առանձնահատկությունների , արդի դարաշրջանի միջազգային հակամարտությունների, համաշխարհայնացման, մշակույթի տարբեր ոլորտներում արձանագրված նվաճումների արդյունքների մասին, արդի աշխարհաքաղաքական փոփոխությունների պատճառների ու հետևանքների , նոր աշխարհակարգի, համամոլորակային ու հումանիտար հիմնախնդիրների, միջազգային համագործակցության ու խաղաղության անհրաժեշտության մասին:
Վերջնարդյունքներ		Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ ԱՄՆ-ը, եվրոպական, Արևելքի խոշոր երկրները, ԱՊՀ երկրները և դրանց մայրաքաղաքները, բնութագրել նշված ժամանակաշրջանի պետական և մշակութային նշանավոր գործիչների, ներկայացնել աշխարհի տարբեր երկրների տնտեսական զարգացման առանձնահատկությունները, արդի դարաշրջանի միջազգային հարաբերությունների միտումները, հակամարտությունների պատճառներն ու հետևանքները, համաշխարհայնացման դրական ու բացասական արդյունքները, բացատրել ազատականացում, ինտեգրում, գլոբալիզացիա, կոոպերացիա, մետրոպոլիա, անեքսիա, «Բեռլինյան պատ», «Երկաթյա լեդի» բառերի և արտահայտությունների իմաստը, գնահատել ու համեմատել աշխարհի տարբեր երկրների տնտեսական ու արտաքին քաղաքականությունները, համեմատել նշանավոր պետական գործիչների գործունեությունը, քննարկել ու տեսակետներ հայտնել համաշխարհային նշանակություն ունեցող հիմնախնդիրների վերաբերյալ, վերհանել ներկայիս Չինաստանի զարգացման յուրահատկությունները, արաբական աշխարհի հիմնախնդիրները և վերջին զարգացումները:

Ժամ	Էջ	Դաս
1/27/	132-137	Դաս 22. Արևմուտքի երկրները 1991 թվականից մինչև մեր օրերը
1/28/	138-143	Դաս 23. Հետխորհրդային երկրները 1991 թվականից մինչև մեր օրերը
1/29/	144-148	Դաս 24. Միջազգային հարաբերությունները հետսառըպատերազմյան շրջանում
1/30/	149-153	Դաս 25. Արդի աշխարհի հիմնախնդիրները
1/31/	154-158	Դաս 26-27. Համաշխարհային մշակույթը 20-րդ դարի երկրորդ կեսին և 21-րդ դարի սկզբին։Գիտությունը:
1/32/	159-163	Գրականությունը և արվեստը:
1/33/		Կրկնություն
1/34/		Կրկնություն

Թեմատիկ պլանավորում
«Հայոց պատմություն»
9-րդ դասարան
Շաբաթական 3 ժամ
Տարեկան 102 ժամ

Դասագրքի հեղինակներ՝
Հայոց պատմություն (Նորագույն շրջան): Մաս 1, Մաս 2: Դասագիրք հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի համար / Վ. Բարխուդարյան, Ա. Հակոբյան, Հ. Հարությունյան և ուրիշ./ - Երևան, «Մանմար», 2019.

Ներածություն			
Նպատակ			Նպաստել «Հայոց պատմություն» առարկայի 9-րդ դասարանի բովանդակային հիմնական նյութի, հայոց պատմության Նորագույն շրջանի վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը:
Վերջնարդյունքներ			**Կարողանա՝** • Ընդհանուր գծերով ներկայացնել 9-րդ դասարանի «Հայոց պատմություն» առարկայի ուսումնական տարվա ընթացքում անցնելիք նյութի ընդհանուր բովանդակությունը: • Թվարկել հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանի կարևոր իրադարձությունները (1918 թ. մայիսյան փառահեղ հաղթանակներից՝ մինչև մեր օրերը):
Ժամ	Ժամ	Էջ	Դաս
1	1	3-4	Ներածություն
Բաժին 1 **Հայաստանի Առաջին Հանրապետությունը** **(1918 թ. մայիսի 28 - 1920 թ. դեկտեմբերի 2)**			
Թեմա 1 **Հանրապետության կայացումը** **Թեմա 2** **Հանրապետության ներքին դրությունը**			
Նպատակ			Նպաստել Հայաստանի առաջին Հանրապետության կայացման, Բաթումի պայմանագրի, իշխանության մարմինների և բանակի ձևավորման, կրթության զարգացման մասին գիտելիքների ձեռք բերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունները, փաստերը, գործիչների գործունեությունը բացատրելու, մեկնաբանելու, համեմատելու, դիրքորոշում հայտնելու, Հանրապետության հռչակման կարևորությունը արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ			**Կարողանա՝** Ներկայացնել և բացատրել Հայաստանի

			Հանրապետության հռչակման օրը, խորհրդանիշները, հայոց բանակի առաջին ղեկավար գործիչներին, Բաթումի հաշտության պայմանագրի կնքման մասին, Հանրապետությունում գործող քաղաքական կուսակցությունները: Պարզաբանել Անդրկովկասյան սեյմի լուծարման պատճառները և Հայաստանի անկախության հռչակման պատմական անհրաժեշտությունը, արժևորել ազգային բանակի ստեղծումը պետության կայացման գործում:
Թեմա 1 **Հանրապետության կայացումը**			
1	2	5-6	**Դաս 1.**Հայաստանի Հանրապետության հռչակումը:
1	3	6-7	Դաս 1.Բաթումի պայմանագիրը
1	4	7-9	**Դաս 2.**Իշխանության մարմինների ձևավորումը
1	5	10-11	Դաս 2.Իշխանության մարմինների ձևավորումը/Բանակի ստեղծումը/
1	6	11	Դաս 2.Իշխանության մարմինների ձևավորումը/Դիվանագիտական կապերի հաստատումը/
1	7	12-13	Դաս 2.Իշխանության մարմինների ձևավորումը/ՀՀ պետական խորհրդանիշները:Հայաստանի անկախ պետականության վերականգնման պատմական նշանակությունը/
1	8		Կրկնություն
Թեմա 2 **Հանրապետության ներքին դրությունը**			
1	9	16-18	**Դաս 1-2.**Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը
1	10	18-19	**Դաս 1-2.**Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը
1	11	19-21	**Դաս 1-2.**Հանրապետության կրթամշակութային կյանքը
1	12	22-23	**Դաս 3.**Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը:
1	13	23-24	**Դաս 3.**Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը: Թուրք-թաթարական խռովությունները
1	14	24-25	**Դաս 3.**Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը: 1920 թ. մայիսյան ապստամբությունը
1	15		Կրկնություն
Թեմա 3 **Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և Հայկական հարցը 1918-1920 թթ.**			

Նպատակ			Նպաստել Հայաստանի Հանրապետության միջազգային դրության և 1918-1920 թթ Հայկական հարցի վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունները, փաստերը, գործիչների գործունեությունը բացատրելու, մեկնաբանելու, համեմատելու, դիրքորոշում հայտնելու, գնահատելու և արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ			**Կարողանա՝** • Ներկայացնել և բացատրել Հայաստանի հարաբերությունները Քառյակ դաշինքի երկրների հետ և հայկական պատվիրակությունների կազմը,Փարիզի խորհրդաժողովի հրավիրման ժամանակը, Հայկական հարցը ներկայացնող պատվիրակությունները և նրանց միջև առկա տարաձայնությունները: • Մեկնաբանել Հայաստանի հարաբերությունները նրա անմիջական հարևաններ Վրաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի և Իրանի հետ, • բացահայտել Խորհրդային Ռուսաստանի կողմից Հայաստանի անկախության ճանաչման անհրաժեշտությունը, • վերլուծել <<Միացյալ և Անկախ Հայաստանի>> հռչակագիրը:
1	16	27-28	**Դաս1.** Հարաբերությունները Քառյակ միության և հարևան պետությունների հետ
1	17	29-30	**Դաս1.** Հարաբերությունները Քառյակ միության և հարևան պետությունների հետ
1	18	31-32	**Դաս 2-3.** Հայկական հարցը Փարիզի խաղաղության խորհրդաժողովում և Սևրի պայմանագիրը
1	19	33-34	**Դաս 2-3.** Հայկական հարցը Փարիզի խաղաղության խորհրդաժողովում և Սևրի պայմանագիրը
1	20	35-37	**Դաս 2-3.** Հայկական հարցը Փարիզի խաղաղության խորհրդաժողովում և Սևրի պայմանագիրը :Կիլիկիահայության դրությունը
1	21		**Կրկնություն**
1	22		Թեմատիկ գրավոր աշխատանք
Թեմա 4 **Հայաստանի Հանրապետության անկումը**			
Նպատակ			Նպաստել Հայաստանի Հանրապետության անկման շրջանի մասին գիտելիքների ձեռք բերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերը,

			իրադարձությունները, գործիչների գործունեությունը բացատրելու, մեկնաբանելու, համեմատելու, վերաբերմունք արտահայտելու և գնահատելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ			**Կարողանա՝** • Ներկայացնել և բացատրել քեմալական շարժման ղեկավարի և նրա նպատակների մասին, թուրք - հայկական պատերազմի կարևորագույն իրադարձությունների մասին • մեկնաբանել <<ազգային ուխտ>>, մեջլիս արտահայտությունները, • բացահայտել Խորհրդային Ռուսաստանի և Քեմալական Թուրքիայի մերձեցման պատճառները
1	23	38-40	Դաս 1.Հայաստանը ռուս-թուրքական հարաբերությունների ոլորտում
1	24	40-42	Դաս 1.Հայաստանը ռուս-թուրքական հարաբերությունների ոլորտում
1	25	42-44	1920 թ. թուրք – հայկական պատերազմը: Հայաստանի խորհրդայնացումը
1	26	45-46	1920 թ. թուրք – հայկական պատերազմը: Հայաստանի խորհրդայնացումը
1	27		**Կրկնություն**
Բաժին 2 **Խորհրդային Հայաստանը և Հայկական Սփյուռքը 1920-1945 թթ.**			
Թեմա 5 Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը 1920-1922 թվականներին **Թեմա 6 Խորհրդային Հանրապետության տարածքային հիմնախնդիրները 1920-1922 թվականներին**			
Նպատակ			Նպաստել 1920-1922 թթ. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության, տարածքային հիմնախնդիրների մասին գիտելիքների ձեռք բերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերը, իրադարձությունները բացատրելու, մեկնաբանելու, համեմա-տելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ			**Կարողանա՝** • Ներկայացնել և բացատրել խորհրդային իշխանության մարմինների կազմավորումը, ԱԽԴՍՀ-ի կազմավորումը, փետրվարյան ապստամբությունը • բացատրել հեղկոմ, ռազմական կոմունիզմ, պարենմասնատրում տերմինները • հիմնավորել հեղկոմների դերը որպես

			իշխանության օրենսդիր և գործադիր մարմիններ, • վերլուծել փետրվարյան ապստամբության պատճառները, • հիմնավորել ԽՍՀՄ կազմավորման նշանակությունը
Թեմա 5 Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը 1920-1922 թվականներին			
1	28	49-50	Դաս 1. Խորհրդային վարչակարգի հաստատումը:
1	29	51-52	Դաս 1. Խորհրդային վարչակարգի հաստատումը: Փետրվարյան ապստամբությունը
1	30	53-54	Դաս 2. Հայաստանի Սահմանադրությունը: Անդրկովկասի Խորհրդային Դաշնային Հանրապետության և ԽՍՀՄ ստեղծումը:
Թեմա 6 Խորհրդային Հանրապետության տարածքային հիմնախնդիրները 1920-1922 թվականներին			
1	31	56-58	Դաս 1-2. Հայաստանի սահմանների հարցը
1	32	59-60	Դաս 1-2. Հայաստանի սահմանների հարցը. Պայքար Լոռու, Ջավախքի Նախիջևանի, Զանգեզուրի համար:
1	33	60-62	Դաս 1-2. Հայաստանի սահմանների հարցը. Պայքար Արցախի համար:
1	34		Գործնական աշխատանք
1	35		Կրկնություն
1	36		**Թեմատիկ գրավոր աշխատանք**
Թեմա 7 Սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքը Խորհրդային Հայաստանում 1922-1941 թթ.			
Նպատակ			Նպաստել 1922-1941 թթ. Խորհրդային Հայաստանում սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունները, փաստերը, գործիչների գործունեությունը բացատրելու, մեկնաբանելու, համեմատելու, արժևորելու և գնահատելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ			**Կարողանա՝** • Ներկայացնել և բացատրել տնտեսության վերականգմանն ուղղված միջոցառումները, քաղաքական բռնությունների իրականացման ժամանակաշրջանը,զոհերի ընդհանուր թիվը, ԽՍՀՄ նոր սահմանադրության ընդունման ժամանակը, հիմական բովանդակությունը: • Մեկնաբանել ինդուստրացում, կոլեկտիվացում, կուլակ, Անհատի պաշտամունք տերմինները, բնութագրել ԽՍՀՄ նոր սահմանադրությունը:
1	37	63-64	**Դաս 1.** Տնտեսության վերականգնումը:Երկրի

			արդյունաբերացումը և գյուղատնտեսության կոլեկտիվացումը
1	38	65-67	**Դաս 1**. Տնտեսության վերականգնումը։Երկրի արդյունաբերացումը և գյուղատնտեսության կոլեկտիվացումը
1	39	68-71	**Դաս 2 .** Հասարակական-քաղաքական կյանքը։Խորհրդային Հայաստանը՝ միութենական հանրապետություն:
1	40	71-73	**Դաս 2 .** Հասարակական-քաղաքական կյանքը։Խորհրդային Հայաստանը՝ միութենական հանրապետություն:
1	41		Կրկնություն
Թեմա 8 **Հայկական Սփյուռքը 1920-1945 թթ.**			
Նպատակ			Նպաստել Հայկական սփյուռքի առաջացման մասին նոր գիտելիքների ձեռք բերմանը, 1920-1945 թթ. սփյուռքի հետ կապված կարևոր փաստերը, իրադարձությունները, գործիչների գործունեությունը բացատրելու, մեկնաբանելու, համեմատելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու և արժորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ			**Կարողանա՝** • Ներկայացնել և բացատրել Սփյուռքի առաջացման, Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսների հրավիրման ժամանակները և հայկական պատվիրակությունների կազմը: • Բացատրել սփյուռքի առաջացման պատճառները:
1	42	75-76	**Դաս 1-2 .** Սփյուռքի առաջացումը։ Սփյուռքի հարաբերությունները Հայաստանի հետ և 1920-1930-ական թվականների ներգաղթը։
1	43	77-78	**Դաս 1-2 .** Սփյուռքի առաջացումը։ Սփյուռքի հարաբերությունները Հայաստանի հետ և 1920-1930-ական թվականների ներգաղթը։
1	44		Կրկնություն
Թեմա 9 **Հայ ժողովուրդը երկրորդ աշխարհամարտի տարիներին /1939-1945 թթ./**			
Նպատակ			Նպաստել հիտլերյան Գերմանիայի ԽՍՀՄ- ի վրա հարձակման և Հայրենական պատերազմի և դրանում հայերի մասնակցության մասին գիտելիքների ձեռք բերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերը, իրադարձությունները բացատրելու, մեկնաբանելու, համեմատելու, վերաբերմունք արտահայտելու, Հայրենական պատերազմին հայերի մասնակցության դերն արժևորելու կարողությունների զարգացմանը:

Վերջնարդյունքներ			**Կարողանա՝** • Ներկայացնել Հայրենական պատերազմի և նրա փուլերի ժամանակագրական սահմանները, հայկական դիվիզիաները և նրանց մարտական ուղին:
1	45	81-84	**Դաս 1-2.** Հայ ժողովրդի ուժերի համախմբումը և մասնակցությունը պատերազմին /Պատերազմի սկիզբը,Հայկական զորամիավորումներն ու հերոսները/
1	46	85-87	**Դաս 1-2.** Հայ ժողովրդի ուժերի համախմբումը և մասնակցությունը պատերազմին /Սփյուռքահայերի մասնակցությունը,պատերազմի ավարտը/
Թեմա 10 **Խորհրդային Հայաստանի մշակույթը 1920-1945 թթ.**			
Նպատակ			Նպաստել Խորհրդային Հայաստանի մշակույթի մասին գիտելիքների ձեռք բերմանը, մշակույթի զարգացման պայմանները, առանձնահատկությունները, ձեռքբերումները, գործիչների գործունեությունը համեմատելու, համադրելու, բացատրելու, բնութագրելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ			**Կարողանա՝** • Բնութագրել մշակութային գործի կազմակերպման առաջին միջոցառումները, հայկական մշակույթի կարևոր ձեռքբերումները գիտության և արվեստի բնագավառներում: • Արժևորել ՀԽՍՀ ԳԱ ստեղծումը:
1	47	90-92	**Դաս 1.**Խորհրդային իշխանության քաղաքականությունը մշակույթի բնագավառում:Կրթական համակարգի ձևավորումը
1	48	92-95	**Դաս 2.** Գիտությունը, գրականությունը և արվեստը
1	49	95-98	**Դաս 2.** Գիտությունը, գրականությունը և արվեստը
1	50		Կրկնություն
Բաժին 3. **Խորհրդային Հայաստանը և հայկական սփյուռքը 1945-1991 թթ.**			
Թեմա 12 **ԽՍՀ տնտեսությունը, հասարակական-քաղաքական կյանքը**			
Նպատակ			Նպաստել ՀԽՍՀ տնտեսության, հասարակական-քաղաքական կյանքի. մասին գիտելիքների ձեռք բերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունները, փաստերը, գործիչների գործունեությունը բացատրելու, մեկնաբանելու, համեմատելու, դիրքորոշում հայտնելու, գնահատելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ			**Կարողանա՝** • Ներկայացնել և բացատրել տնտեսության

			վերականգնմանն ուղղված միջոցառումները, Ստալինյան նոր բռնությունները և դրանց հետևանքները: • Պարզաբանել քաղաքական նոր բռնությունների պատճառները: • Համեմատել 1930-ական և 1940-ական թվականների բռնությունները:
1	51	114-116	Դաս 1.Տնտեսությունը
1	52	116-118	Դաս 1.Տնտեսությունը
1	53	119-120	Դաս 2. Հասարակական - քաղաքական կյանքը
1	54	121-122	Դաս 2. Հասարակական - քաղաքական կյանքը
Թեմա 11 **Հայկական Սփյուռքը հետպատերազմյան շրջանում**			
Նպատակ			Նպաստել 1945-1991թթ. Հայկական սփյուռքի վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունները, փաստերը, գործիչների գործունեությունը բացատրելու, մեկնաբանելու, համեմատելու, դիրքորոշում հայտնելու, գնահատելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ			**Կարողանա՝** • Ներկայացնել և բացատրել հայրենադարձության և Հայկական հարցի վերաբացման վերաբերյալ կարևորագույն փաստերը: • Բացատրել Խորհրդային Հայաստանի նկատմամբ սփյուռքահայության վերաբերմունքի փոփոխության պատճառները: • Թվարկել Հայկական հարցով զբաղվող միջազգային կազմակերպությունները:
1	55	107-108	Դաս 1-2. Սփյուռքը և Խորհրդային Հայաստանի նոր քաղաքականությունը
1	56	109-110	Դաս 1-2. Սփյուռքը և Խորհրդային Հայաստանի նոր քաղաքականությունը /Հայկական համայնքները/
1	57	111-112	Դաս 1-2. Սփյուռքը և Խորհրդային Հայաստանի նոր քաղաքականությունը /Հայկական համայնքները/
1	58		Կրկնություն
1	59		Թեմատիկ գրավոր աշխատանք
Թեմա 13 **Վերակառուցման քաղաքականությունը,Արցախյան շարժումը**			
Նպատակ			Նպաստել Վերակառուցման քաղաքականության, Արցախյան շարժման, Հայաստանի անկախացման գործընթացի մասին գիտելիքների ձեռք բերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերը, իրադարձությունները, գործիչների գործունեությունը բացատրելու, մեկնաբանելու, համեմատելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու և արժորելու կարողությունների զարգացմանը:

Վերջնարդյունքներ			• **Կարողանա՝** • ներկայացնել և բացատրել վերակառուցման քաղաքականության ժամանակաշրջանը և դրա անհրաժեշտությունը, արցախահայության ինքնորոշման մասին, Արցախյան շարժման սկիզբը, Սումգայիթյան ողբերգության ժամանակը և զոհերի թիվը: • բացատրել Արցախյան շարժման, հայերի Ադրբեջանից բռնագաղթի պատճառները , պարզաբանել ադրբեջանական իշխանությունների դիրքորոշումը հիմնախնդրի վերաբերյալ: • ներկայացնել Սպիտակի երկրաշարժը: • արտահայտել կարծիք ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1990 թ. մայիսյան ընտրությունների մասին, • համեմատել մայիսյան ընտրությունները նախորդ բոլոր ընտրությունների հետ :
1	60	123-125	**Դաս1.**Վերակառուցումն ու Արցախյան շարժման սկիզբը
1	61	125-127	**Դաս1.**Վերակառուցումն ու Արցախյան շարժման սկիզբը
1	62	127-130	**Դաս 2.**Ազատագրական շարժման վերելքը
1	63	130-132	**Դաս 2.**Ազատագրական շարժման վերելքը /Սպիտակի երկրաշարժը/
Թեմա 14 Հայաստանի Հանրապետության անկախացման գործընթացը			
1	64	134-136	**Դաս 1.**Պայքար Հայաստանի անկախացման համար
1	65	136-137	**Դաս 1.**Պայքար Հայաստանի անկախացման համար
1	66		Կրկնություն
Թեմա 15 **Խորհրդային Հայաստանի և Հայկական սփյուռքի մշակույթը 1945-1991թթ.**			
Նպատակ			Նպաստել Խորհրդային Հայաստանի և Հայկական սփյուռքի մշակույթի վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, մշակույթի զարգացման պայմանները, առանձնահատկությունները, ձեռքբերումները, գործիչների գործունեությունը համեմատելու, համադրելու, բացատրելու, բնութագրելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ			**Կարողանա՝** • ներկայացնել մշակույթին վերաբերող կարևորագույն փաստերը և գործիչներին:

			• բացատրել մշակույթի վերելքի պատճառները:
1	67	139-142	**Դաս 1** .Կրթությունը և գիտությունը
1	68	143-144	**Դաս 2.3** Գրականությունը և արվեստը
1	69	144-146	**Դաս 2.3** Գրականությունը և արվեստը
1	70	147148	**Դաս 2.3** Գրականությունը և արվեստը
1	71		**Թեմատիկ գրավոր աշխատանք**
Բաժին 4 **Հայաստանի Հանրապետությունը: Արցախի (Լեռնայի Ղարաբաղի) Հանրապետությունը և Հայկական սփյուռքը 1991 թվականից մինչև մեր օրերը:**			
Նպատակ			Նպաստել ՀՀ անկախության հանրաքվեի ,իշխանության մարմիների, նախագահական ընտրությունների մասին գիտելիքների ձեռք բերմանը : Զարգացնել խորհրդանիշները, Սահմանադրությունը, բանակը, երկաստիճան կրթական համակարգը արժևորելու կարողությունները: Նպաստել ԼՂՀ-ի անկախության հանրաքվեի, իշխանության մարմինների, խորհրդանիշների մասին գիտելիքների ձեռք բերմանը: Զարգացնել Շուշիի ազատագրումը արժևորելու հմտությունը:
Վերջնարդյունքներ			**Կարողանա՝** • ներկայացնել և բացատրել ՀՀ անկախության հռչակման մանրամասները, նախագահական ընտրությունները և ՀՀ առաջին նախագահի գործունեությունը: • բնութագրել Հայաստանի Հանրապետությունը: • բացահայտել Ադրբեջանի ագրեսիան ԼՂՀ-ի դեմ:
Թեմա 16 Հայաստանի Հանրապետության ամրապնդման գործընթացը:			
1	72	150-151	**Դաս 1** .Անկախ Հայաստանի Հանրապետության կերտումը /ՀՀ անկախության հռչակումը/
1	73	152-153	**Դաս 1** .Անկախ Հայաստանի Հանրապետության կերտումը/ՀՀ սահմանադրության ընդունումը/
1	74	153-154	**Դաս 1** .Անկախ Հայաստանի Հանրապետության կերտումը /Հայոց ազգային բանակը/
Թեմա 17 ՀՀ տնտեսական դրությունը:			
1	75	156-157	**Դաս 17.1** Հայաստանը տնտեսական վերափոխումների ճանապարհին /Գյուղատնտեսությունը/
1	76	157-159	**Դաս 17.1** Հայաստանը տնտեսական վերափոխումների ճանապարհին /Արդյունաբերությունը/
1	77	160-163	**17.2.**Հասարակական - քաղաքական կյանքը
1	78	163-164	**17.2.**Հասարակական - քաղաքական կյանքը

1	79	165-166	**17.2.** Մշակութային կյանքը
1	80	167-169	**17.2.** Մշակութային կյանքը
1	81		**Կրկնություն**
Թեմա 18 Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը			
1	82	172-174	**Դաս 18.1** . Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչումը և արտաքին քաղաքականությունը
1	83	174-177	**Դաս 18.1** . Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչումը և արտաքին քաղաքականությունը
Թեմա 19 Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետությունը			
1	84	179-180	**Դաս 19.1** Հանրապետության պետականության կայացման գործընթացը
1	85	180-184	**Դաս 19.1** Հանրապետության պետականության կայացման գործընթացը /Արցախյան պատերազմի ծավալումը,Շուշիի ազատագրումը/
1	86	184-187	**Դաս 19.1** Հանրապետության պետականության կայացման գործընթացը /Ապրիլյան քառօրյա պատերազմը/
1	87	188-190	**19.2** Հանրապետության ներքին դրությունը
1	88		**Գործնական աշխատանք**
Թեմա 20 Հայկական սփյուռքը 1991 թվականից մինչև մեր օրերը			
Նպատակ			Նպաստել 1991 թվականից մինչև մեր օրերը ընկած ժամանակահատվածի հայկական սփյուռքի մասին գիտելիքների ձեռք բերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերը, իրադարձությունները, գործիչների գործունեությունը բացատրելու, մեկնաբանելու, համեմատելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու և հայրենիք-սփյուռք հարաբերությունները արժորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ			**Կարողանա՝** • ներկայացնել սփյուռքահայ գլխավոր կենտրոնները • բացատրել սփյուռքահայության ներդրումների անհրաժեշտությունը ՀՀ-ի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում:
1	89	192-193	**Դաս 1-2**. Ժամանակակից Սփյուռքը: Սփյուռք – հայրենիք հարաբերությունները
1	90	193-195	**Դաս 1-2**. Ժամանակակից Սփյուռքը: Սփյուռք – հայրենիք հարաբերությունները
1	91		**Կրկնություն**
10	92-102		Նախաքննական **Կրկնություն**

Դաս 1. Ներածություն

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Ե՞րբ է սկսվել հայոց պատմության նորագույն շրջանը:
2. Ո՞ր հերոսամարտերով և ե՞րբ կյանքի կոչվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը:
3. Ե՞րբ խորհրդայնացվեց Հայաստանը:
4. Ե՞րբ փլուզվեց ԽՍՀՄ-ը և ի՞նչ պայմաններում դրվեց Հայաստանի երրորդ Հանրապետության հիմքերը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայոց պատմության նորագույն շրջանը սկսվում է 1918 թ. Մայիսյան հաղթանակներով:
2. 1918 թ. մայիսյան հերոսամարտերի արդյունքում ստեղծվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը:
3. 1920 թ.վերջին ստեղծվեց Խորհրդային Հայաստանը:
4. 1991 թ. փլուզվեց ԽՍՀՄ-ը և դրվեց Հայաստանի երրորդ հանրապետության հիմքերը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Մեկնաբանել, որ 1918 մայիսի վերջին թուրքական զորքերի դեմ հայ ժողովրդի տարած հաղթանակների արդյունքում ստեղծվեց հայկական անկախ պետականություն՝ Հայաստանի Հանրապետությունը:
2. Բացատրել, որ Արցախյան շարժման և անկախության համար ծավալված պայքարի արդյունքում ստեղծվեց Հայաստանի երրորդ Հանրապետությունը:

Թեմա 1

Հանրապետության կայացումը

Թեմա 2

Հանրապետության ներքին դրությունը

/5 ժամ/

Դաս 1. Հայաստանի Հանրապետության հռչակումը: Բաթումի պայմանագիրը:

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ է հռչակվել Հայաստանի առաջին Հանրապեությունը:
2. Ե՞րբ է լուծարվել Անդրկովկասյան Սեյմը:
3. Ո՞ր երկրի հետ է Հայաստանը ստորագրել Բաթումի հաշտության պայմանագիրը:
4. Ե՞րբ է ստորագրվել Բաթումի հաշտության պայմանագիրը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայաստանի առաջին Հանրապետությունը հռչակվել է 1918 թ. մայիսի 28-ին:
2. Անդրկովկասյան Սեյմը լուծարվել է 1918 թ. մայիսի 26-ին:
3. Բաթումի պայմանագիրը Հայաստանը ստորագրել է Թուրքիայի հետ:

4. Բաթումի հաշտության պայմանագիրը ստորագրվել է 1918 թ. հունիսի 4-ին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել առաջին Հանրապետության հռչակման հիմնական նախադրյալները. Մայիսյան հերոսամարտերում հայոց զորքի տարած փայլուն հաղթանակները հայկական անկախ պետականության վերականգնման հիմնական նախադրյալներից են:

Դաս 2.Իշխանության մարմինների ձևավորումը /<<Մանմար>>/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Որո՞նք էին իշխանության երեք թևերը:
2. Ո՞վ դարձավ ՀՀ առաջին վարչապետ:
3. Ո՞վ դարձավ ՀՀ բանակի գլխավոր հրամանատար:
4. ՀՀ պետական Ի՞նչ խորհրդանիշներ ընդունվեցին և ինչ գիտեք դրանց մասին:
5. Ո՞ր ստեղծագործությունը դարձավ ՀՀ պետական հիմն:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. ՀՀ առաջին վարչապետ դարձավ Հովհաննես Քաջազնունին:
2. ՀՀ բանակի գլխավոր հրամանատար դարձավ Թովմաս Նազարբեկյանը:
3. Ընդունվեցին պետական խորհրդանիշները. զինանշանը /հեղինակներ՝ Ալեքսանդր Թամանյան և Հակոբ Կոջոյան/, դրոշը / եռագույն/, օրհներգը / հեղինակ՝ Մ.Նալբանդյան/:
4. ՀՀ պետական հիմն դարձավ «Մեր հայրենիք» երգը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Տարբերակել իշխանության երեք թևերը (օրենսդիր, գործադիր, դատական):
2. Արժևորել բանակի դերը պետականության ամրապնդման գործընթացում:
3. Կարծիք հայտնել պետության համար պետական խորհրդանիշների կարևորության վերաբերյալ:

Դաս 1-2. Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը և կրթամշակութային կյանքը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Որքա՞ն որբ ու անապաստան երեխաներ կային ՀՀ-ում:
2. Ի՞նչ միջոցներ ձեռնարկեց ՀՀ կառավարությունը ժողովրդի ֆինանսական գոյությունը պահպանելու համար:
3. Ե՞րբ ընդունվեց հողի մասին օրենքը:

4. Քա՞նի քաղաքական կուսակցություններ էին գործում ՀՀ-ում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. ՀՀ-ում կային շուրջ 40 հազար որբ ու անապաստան երեխաներ:
2. ՀՀ-ում գործում էին 8 քաղաքական կուսակցություններ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ ՀՀ կառավարությունը ժողովրդի ֆինանսական գոյությունը պահպանելու նպատակով մտցրեց հացի և բամբակի պետական մենաշնորհ: Եվրոպա և ԱՄՆ մեկնեց Հովի. Քաջազնունու գլխավորած պատվիրակությունը:
2. Ցույց տալ, որ հողի մասին օրենքը ընդունվեց Մայիսյան (բոլշևիկյան) ապստամբության ճնշումից հետո:
3. Առանձնացնել 3 ավանդական կուսակցությունները. (Արմենական, Հնչակյան, ՀՅԴ):

Դաս 3. Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը: 1920 թ. մայիսյան ապստամբությունը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Ու՞մ կողմից էին հրահրվում թուրք-թաթարական խռովությունները:
2. Մայիսի 1-ին ո՞ր քաղաքը դարձավ ապստամբության կենտրոն:
3. Ո՞վ էր ապստամբական ուժերի ղեկավարը:
4. Ո՞րն էր ապստամբության նպատակը:
5. Ե՞րբ հրաժարական տվեց Ալ. Խատիսյանի կառավարությունը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Թուրք-թաթարական խռովությունները հրահրվում էին Թուրքիայի և Ադրբեջանի կողմից:
2. Մայիսի 1-ին նվիրված խաղաղ ցույցերը Ալեքսանդրապոլում վերածվեցին ապստամբության և Ալեքսանդրապոլ քաղաքը դարձավ պստամբության կենտրոն:
3. Ապստամբական ուժերի ղեկավարը Սարգիս Մուսայելյանն էր:
4. Ալ. Խատիսյանի կառավարությունը հրաժարական տվեց 1920 թ. մայիսին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ թուրք-թաթարական խռովությունների գլխավոր նպատակը. Հայաստանի տարածքներին տիրանալն էր:

2. Ցույց տալ, որ մայիսյան ապստամբության հիմնական նպատակը Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումն էր:

Դաս 1-2. Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը և կրթամշակութային կյանքը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Ի՞նչ աստիճաններից էր կազմված դպրոցական համակարգը:
2. Ե՞րբ կառավարությունը որոշում ընդունեց համալսարանի բացման մասին:
3. Ե՞րբ հանդիսավոր բացվեց Համալսարանը:
4. Ո՞վ դարձավ Համալսարանի առաջին ռեկտոր:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 1919 թ. մայիսի 16-ին կառավարությունը որոշում ընդունեց համալսարանի բացման մասին:
2. Համալսարանը բացվեց 1920 թ. հունվարին:
3. Համալսարանի առաջին ռեկտոր դարձավ Յու. Ղամբարյանը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Առանձնացնել կրթական համակարգի աստիճանները. տարրական և միջնակարգ:
2. Կարծիք հայտնել համալսարանի բացման անհրաժեշտության վերաբերյալ:

Թեմա 3

Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և Հայկական հարցը 1918-1920 թթ.

Դաս 1. Հարաբերությունները Քառյակ միության և հարևան պետությունների հետ:

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Որո՞նք էին Հայաստանի հարևան պետությունները:
2. Ո՞վ էր գլխավորում հայկական զորքը Վրաստանի դեմ պատերազմում:
3. Ե՞րբ Լոռին հայտարարվեց «չեզոք գոտի»:
4. Տարածքային ի՞նչ հավակնություններ ուներ Ադրբեջանը Հայաստանի նկատմամբ:
5. 1920 թ. ադրբեջանցիները ո՞ր քաղաքում կազմակերպեցին հայ բնակչության կոտորած:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայկական զորքը Վրաստանի դեմ պատերազմում գլխավորում էր Դրաստամատ Կանայանը (Դրոն):

2. 1919 թ. հունվարին Լոռին հայտարարվեց «չեզոք գոտի»:
3. 1920 թ. ադրբեջանցիները Շուշի քաղաքում կազմակերպեցին անզեն հայ բնակչության կոտորած:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել ՀՀ հարևան երկրները. Իրան, Վրաստան, Թուրքիա, Ադրբեջան:
2. Առանձնացնել այն տարածքները, որոնց նկատմամբ հավակնություններ ուներ Ադրբեջանը. Արցախը (Լեռնային Ղարաբաղ), Նախիջևան, Զանգեզուրը (Սյունիքը):
3. Քարտեզի վրա ցույց տալ Արցախը (Լեռնային Ղարաբաղ), Զանգեզուրը (Սյունիքը) և Նախիջևանը:

Դաս 2-3. Հայկական հարցը Փարիզի խաղաղության խորհրդաժողովում և Սևրի պայմանագիրը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Ե՞րբ սկսվեց Փարիզի խաղաղության խորհրդաժողովը:
2. Հայկական ի՞նչ պատվիրակություններ էին մասնակցում խորհրդաժողովին:
3. Ո՞ր երկրին էր նախատեսվում հանձնել Հայաստանի մանդատը:
4. Ե՞րբ է ստորագրվել Սևրի պայմանագիրը և ըստ Սևրի պայմանագրի որքա՞ն էր կազմում ՀՀ տարածքը:
5. Ե՞րբ հռչակվեց Ինքնավար Կիլիկիան:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Փարիզի խաղաղության խորհրդաժողովը սկսվել է 1919 թ. հունվարին:
2. Նախատեսվում էր, որ Հայաստանի մանդատը կստանձնի ԱՄՆ-ը:
3. Սևրի պայմանագիրը ստորագրվել է 1920 թ. օգոստոսի 10 -ին:
4. Ինքնավար Կիլիկիան հռչակվել է 1920 թ. օգոստոսին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Առանձնացնել հայկական երկու պատվիրակությունները և դրանց ղեկավարներին (Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը գլխավորում էր Ավետիս Ահարոնյանը, իսկ արևմտահայերինը՝ Պողոս Նուբար փաշան): (Նշել առնվազն մեկը)
2. Պարզաբանել, որ Միացյալ Հայաստանի տարածքը ըստ Սևրի պայմանագրի կազմելու էր 160 հազար քառ. կմ:
3. Քարտեզի վրա ցույց տալ Միացյալ Հայաստանի տարածքը ըստ Սևրի պայմանագրի:

Թեմա 4

Հայաստանի Հանրապետության անկումը

Դաս 1.Հայաստանը ռուս-թուրքական հարաբերությունների ոլորտում

Դաս 2.1920 թ. թուրք – հայկական պատերազմը: Հայաստանի խորհրդայնացումը /

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

2.Ո՞րն էր <<Թուրքական ազգային ուխտ>> կոչվող փաստաթղթի բովանդակությունը:
3 Ե՞րբ է սկսվել թուրք-հայկական պատերազմը:
4. Ինչպե՞ս էր անցնում հայ - թուրքական սահմանը Ալեքսանդրապոլի պայմանագրով :
5.Ե՞րբ անկում ապրեց Հայաստանի առաջին Հանրապետությունը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

2.Հայ – թուրքական պատերազմը սկսվել է 1920 թ. սեպտեմբերի 23- ին:
3.1920 թ.դեկտեմբերի 2-ի-լույս 3-ի գիշերը կնքված Ալեքսանդրապոլի պայմանագրով հայ-թուրքական սահմանը անցնում էր Ախուրյան և Արաքս գետերի հունով:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ<<Թուրքական ազգային ուխտ>> կոչվող փաստաթուղթը քեմալականների հայաջինջ քաղաքականության մասին է, որը ժառանգվել էր երիտթուրքերից:
2.Պարզաբանել, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի հայ-ռուսական համաձայնագրով անկում է ապրում Հայաստանի առաջին Հանրապետությունը և Հայաստանը հայտարարվում է Սոցիալիստական Խորհրդային անկախ Հանրապետություն:

Թեմա 5

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը 1920-1922 թվականներին

Թեմա 6 Խորհրդային Հանրապետության տարածքային հիմնախնդիրները 1920-1922 թվականներին

Դաս 1. Խորհրդային վարչակարգի հաստատումը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Ի՞նչ էին կոչվում օրենսդիր և գործադիր մարմինները:
2. Ի՞նչ էր ռազմական կոմունիզմի քաղաքականությունը և ի՞նչու այն կիրառվեց :
3. Քաղաքական ո՞ր նշանավոր գործիչները զոհ գնացին բռնաճնշումներին:
4. Ո՞վ նշանակվեց Ժողկոմխորհի նախագահ:
5. Ե՞րբ է տեղի ունեցել Փետրվարյան ապստամբությունը և ո՞վ է եղել Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Օրենսդիր և գործադիր մարմինները կոչվում էին հեղկոմներ:
2. Ձերբակալվեցին Հ. Քաջազնունին, Հ. Օհանջանյանը;
3. Ժողկոմխորհի նախագահ նշանակվեց Ալ. Մյասնիկյանը:
4. Հայրենիքի Փրկության կոմիտեն գլխավորում էր Սիմոն Վրացյանը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ ռազմական կոմունիզմի քաղաքականությունը միջոցառումների համակարգ էր, որում կենտրոնականը պարենամասնատրումն էր: Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը կիրառվեց երկրի սոցիալ – տնտեսական ծանր դրությունը կայունացնելու նպատակով:
2. Մեկնաբանել, որ Փետրվարյան ապստամբությունը տեղի է ունեցել 1921 թ. փետրվարի 16-ին, որը ուղղված էր Հայաստանում կիրառվող բռնությունների դեմ:

Դաս 1-2. Հայաստանի սահմանների հարցը. Պայքար Լոռու, Ջավախքի, Նախիջևանի, Զանգեզուրի և Արցախի համար

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Ի՞նչ որոշումներ ընդունեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն Լեռնային Ղարաբաղի հարցի հետ կապված:
2. Ե՞րբ է ստորագրվել Մոսկվայի պայմանագիրը:
3. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով ո՞ր տարածքը անցավ Ադրբեջանին:
4. Ե՞րբ է ստորագրվել Կարսի պայմանագիրը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Մոսկվայի պայմանագիրը ստորագրվել է 1921 թ. մարտի 16-ին:
2. Մոսկվայի և Կարսի պայմանագրով Նախիջևանը անցավ Ադրբեջանին:
3. Կարսի պայմանագիրը ստորագրվել է 1921 թ. հոկտեմբերի 13-ին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Կարծիք հայտնել ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի հուլիսի 4-ի և հուլիսի 5-ի որոշումներրի վերաբերյալ:
2. Քարտեզի վրա ցույց տալ Նախիջևանը և Ադրբեջանը:

Դաս 2. Հայաստանի Սահմանադրությունը: Անդրկովկասի Խորհրդային Դաշնային Հանրապետության և ԽՍՀՄ ստեղծումը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1.Ե՞րբ է ընդունվել ՀՍԽՀ առաջին Սահմանադրությունը:
2.Կրթության և բանակի վերաբերյալ ինչ հոդվածներ էր նշված ՀՍԽՀ առաջին Սահմանադրությունում:
3. Ե՞րբ է կազմավորվել ԱԽԴՍՀ-ն:
4.Ե՞րբ է ստորագրվել ԽՍՀՄ կազմավորման մասին Հռչակագիրը և Միութենական պայմանագիրը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1.1922թ. հունվարի 30 –ից փետրվարի 4-ը կայացավ ՀՍԽՀ խորհուրդների առաջին համագումարը, որի ժամանակ ընդունվեց ՀՍԽՀ առաջին Սահմանադրությունը:
2. ՀՍԽՀ առաջին Սահմանադրությամբ կրթությունը դարձավ անվճար, իսկ զինվորական ծառայությունը՝ պարտադիր:
3.ԱԽԴՍՀ-ն կազմավորվել է 1922 թ. դեկտեմբերին:
4.ԽՍՀՄ կազմավորման մասին Հռչակագիրը և Միութենական պայմանագիրը ստորագրվել է 1922 թ. դեկտեմբերի 30- ին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Քարտեզի վրա ցույց տալ ԽՍՀՄ-ը:

Թեմա 7
Սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքը Խորհրդային Հայաստանում 1922-1941 թթ.

Դաս 1. Տնտեսության վերականգնումը: Երկրի արդյունաբերացումը և գյուղատնտեսության կոլեկտիվացումը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշիչային նվազագույն պահանջները ստուգելու համար.
1.Ի՞նչ է ՆԷՊ-ը և ԽՍՀՄ-ում այն երբվանի՞ց է իրագործվել:
2. Ի՞նչ է արդյունաբերացումը կամ ինդուստրիացումը:
3.Ի՞նչ է գյուղատնտեսության կոլեկտիվացումը:
4. Ովքե՞ր էին կուլակները և ի՞նչ է կուլակաթափությունը:

Առարկայի չափորոշիչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Արդյունաբերացումը կամ ինդուստրիացումը տնտեսության մեջ արդյունաբերության տարբեր ճյուղերի զարգացումն է:
2. Գյուղատնտեսության կոլեկտիվացումը կոլեկտիվ տնտեսությունների ստեղծումն է՝ ի հաշիվ գյուղացիական անհատական տնտեսությունների:
3. Կուլակները ունևոր գյուղացիներն են:

Առարկայի չափորոշիչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1.Բացատրել, որ ՆԷՊ-ը նոր տնտեսական քաղաքականություն է, որի հիմքում ընկած է պարենային հարկի կիրառումը: ԽՍՀՄ-ում իրագործվել է 1921թ.գարնանից:

2. Ցույց տալ,որ կուլակաթափությունը ունևոր գյուղացիների՝ կուլակների ունեցվածքի բռնագրավումն է բռնություններով և հալածանքներով:

Դաս 2 . Հասարակական-քաղաքական կյանքը: Խորհրդային Հայաստանը՝ միութենական հանրապետություն

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշիչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Ի՞նչ է անհատի պաշտամունքը:
2. Ե՞րբ է այն ձևավորվել ԽՍՀՄ-ում:
3. Ե՞րբ է ընդունվել ԽՍՀՄ-ի նոր սահմանադրությունը:
4. Ե՞րբ է ընդունվել Խորհրդային Հայաստանի նոր սահմանադրությունը:
5. Ի՞նչ է ՀԽՍՀ-ն:

Առարկայի չափորոշիչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Անհատի պաշտամունքը ԽՍՀՄ-ում լիովին ձևավորվել է 1930-ական թվականներին:
2. 1936 թ. դեկտեմբերի 5-ին ընդունվեց ԽՍՀՄ նոր սահմանադրությունը:
3. 1937թ. մարտին ընդունվեց Խորհրդային Հայաստանի նոր սահմանադրությունը:

Առարկայի չափորոշիչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ Անհատի պաշտամունքը Իոսիֆ Ստալինի անձի և դերի խիստ գերագնահատումն է:
2. Գնահատել Խորհրդային Հայաստանի նոր սահմանադրությունը որպես առաջին սահմանադրություն:
3. Բացատրել ՀԽՍՀ հապավումը. Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն:

Թեմա 8

Հայկական Սփյուռքը 1920-1945 թթ.

Դաս 1-2 . Սփյուռքի առաջացումը: Սփյուռքի հարաբերությունները Հայաստանի հետ և 1920-1930-ական թվականների ներգաղթը

Թեմատի
կ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշիչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Ե՞րբ և ի՞նչ պայմաններում է առաջացել հայկական սփյուռքը։
2. Ե՞րբ են հրավիրվել Լոնդոնի և Լոզանի խորհրդաժողովները:
3. Ո՞վ է Ֆ. Նանսենը և ի՞նչ հայանպաստ գործունեություն է ծավալել Ֆ. Նանսենը:
4. Որքա՞ն հայ ներգաղթեց Հայաստան 1921-1936թթ.:

Առարկայի չափորոշիչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայկական Սփյուռքը առաջացել է 1915 թ. ցեղասպանությունից հետո:
2. Լոնդոնի խորհրդաժողովը հրավիրվել է 1921թ., իսկ Լոզանի խորհրդաժողովը 1922 թ. նոյեմբեր – 1923 թ. հուլիս ամիսներին:
3. 1921-1936 թթ. Հայաստան ներգաղթեց ավելի քան 42 հազար հայ։

Առարկայի չափորոշիչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել Օսմանյան կայսրության կողմից իրականացրած հայոց ցեղասպանության հետևանքով Հայկական սփյուռքի առաջացման պատճառները:
2. Բնութագրել Ֆ. Նանսենին, որպես նորվեգացի նշանավոր բևեռախույզ, միջազգային գործիչ,Նոբելյան մրցանակի դափնեկիր:
3. Արժևորել Ֆ. Նանսենի հայանպաստ գործունեությունը Հայաստանում՝ շեշտը դնելով հայ գաղթականների վերաբնակեցման հարցին:

Թեմա 9

Հայ ժողովուրդը երկրորդ աշխարհամարտի տարիներին /1939-1945 թթ./

Դաս 1-2. Հայ ժողովրդի ուժերի համախմբումը և մասնակցությունը պատերազմին

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Ե՞րբ է սկսվել և ավարտվել Հայրենական մեծ պատերազմը:
2. Պատերազմի տարիներին ի՞նչ էր մատակարարում Խորհրդային Հայաստանը:
3. Խորհրդային Հայաստանից և աշխարհի տարբեր երկրներից որքա՞ն հայեր են պատերազմին մասնակցել:
4. Հայկական դիվիզիաներից ո՞րն է ամենանշանավորը և ի՞նչ մարտական ուղի է անցել:
5. Ո՞ր երկրի պարտությամբ ավարտվեց Հայրենական մեծ պատերազմը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայրենական մեծ պատերազմը սկսվել է 1941 թ. հունիսի 22-ին և ավարտվել է 1945 թ. մայիսի 9-ին:
2. Պատերազմի ընթացքում Հայաստանը մատակարարում էր կաուչուկ, պղինձ, կարբիտ և այլն:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ ընդհանուր առմամբ տարբեր երկրներից պատերազմին մասնակցել են 600 հազար հայեր, իսկ միայն ՀԽՍՀ-ից՝ 300 հազար:
2. Ցույց տալ, որ հայկական ամենանշանավոր դիվիզիան <<89-րդ Թամանյան դիվիզիան>> էր, որը հասավ մինչև Բեռլին:
3. Պարզաբանել, որ Գերմանիայի պարտությամբ ավարտվեց Հայրենական մեծ պատերազմը:
4. Կարողանա նկարներով ճանաչել հայ մարշալներից առնվազն երկուսին:

Թեմա 10
Խորհրդային Հայաստանի մշակույթը 1920-1945 թթ.

Դաս 1. Խորհրդային իշխանության քաղաքականությունը մշակույթի բնագավառում: Կրթական համակարգի ձևավորումը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Ո՞րոնք էին խորհրդային իշխանությունների կողմից մշակութային գործի կազմակերպման առաջին միջոցառումները:
2. Նշե՛ք Խորհրդային Հայաստանի հանրակրթական դպրոցի տիպերը:
3. Նշանավոր ի՞նչ բարձրագույն ուսումնական հաստատություններ էին (բուհեր) գործում Խորհրդային Հայաստանում:
4. Ե՞րբ է ստեղծվել ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան:
5. Գիտության ո՞ր բնագավառները հատկապես վերելք ապրեցին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Խորհրդային Հայաստանի հանրակրթական դպրոցը եռաստիճան էր՝ տարրական, յոթամյա, լրիվ միջնակարգ:
2. Զարգացան բնական գիտությունները և հայագիտությունը:
3. ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիան ստեղծվել է 1943 թ.:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ խորհրդային իշխանությունների կողմից մշակութային գործի կազմակերպման առաջին միջոցառումներից էին դպրոցի և կրթության անջատումը եկեղեցուց:
2. Թվարկել Խորհրդային Հայաստանում գործող բուհերից առնվազն երկուսը. (Երևանի պետական համալսարանը, Երևանի կոնսերվատորիան, Մանկավարժական ինստիտուտը, և այլն):
3. Պարզաբանել ՀԽՍՀ ԳԱ ստեղծման անհրաժեշտությունը:

Դաս 2. Գիտությունը, գրականությունը և արվեստը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Ովքե՞ր էին խորհրդահայ գրականության նշանավոր ներկայացուցիչները:
2. Ե՞րբ կազմակերպվեց հանրապետության առաջին պետական դրամատիկական թատրոնը:
3. Ե՞րբ է հիմնադրվել ազգային կինոմատոգրաֆիան և ո՞րն է հայկական կինոյի առաջնեկը:
4. 1920-ական թթ. ովքե՞ր էին հայ կերպարվեստի նշանավոր ներկայացուցիչները:
5. Ովքե՞ր են Խորհրդային Հայաստանում երաժշտության բնագավառի ականավոր ներկայացուցիչները:
6. Ո՞վ է խորհրդահայ ճարտարապետության ամենանշանավոր դեմքը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. ՀԽՍՀ-ի առաջին պետական դրամատիկական թատրոնը հիմնադրվել է 1922 թ.:
2. Խորհրդային Հայաստանում երաժշտության բնագավառի ականավոր ներկայացուցիչներից էին. Արամ Խաչատրյանը, Ալեքսանդր Սպենդիարյանը:
3. Խորհրդահայ ճարտարապետության ամենանշանավոր դեմքը Ալեքսանդր Թամանյանն է:
4. Հայկական կինոյի առաջնեկը «Նամուս» ֆիլմն է:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել խորհրդահայ գրականության նշանավոր ներկայացուցիչներից առնվազն երեքի անունները (Հ. Թումանյան, Ա. Իսահակյան, Ա. Շիրվանզադե, Ե. Չարենց և այլն):
2. Մեկնաբանել, որ 1920-ական թթ. հիմնադրվեց ազգային կինոմատոգրաֆիան:
3. Թվարկել 1920-ական թթ. հայ կերպարվեստի նշանավոր ներկայացուցիչներից առնվազն երկուսի անունները (Մ. Սարյան, Հ. Կոջոյան):
4. Համապատասխանեցնե՛լ մշակութային գործիչի անունը մշակույթի բնագավառին.

Հովհաննես Թումանյան		Երաժշտություն
Մարտիրոս Սարյան		Գրականություն
Ալեքսանդր Սպենդիարյան		Կերպարվեստ

5. Նկարներով ճանաչել խորհրդահայ մշակութային նշանավոր ներկայացուցիչներից առնվազն երեքին:

Թեմա 12

ՀԽՍՀ տնտեսությունը, հասարակական-քաղաքական կյանքը

Դաս 1.Տնտեսությունը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո Խորհրդային Հայաստանի տնտեսության վերականգնմանն ուղղված ի՞նչ միջոցառումներ ձեռնարկվեցին:
2. 1960-1980-ական թթ. հիմնականում ո՞ր քաղաքներում էր կենտրոնացված արդյունաբերությունը:
3. Ե՞րբ է կառուցվել Արփա-Սևան ջրատար թունելը:
4. Ի՞նչ քայլեր ձեռնարկվեցին գյուղատնտեսությունը վերակառուցելու և դժվարին կացությունից դուրս բերելու համար:
5. Ի՞նչ քաղաքականություն էր իրականացնում ԽՍՀՄ-ը սոցիալական ոլորտում հետպատերազմյան շրջանում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 1960-1980-ական թթ. Խորհրդային Հայաստանի արդյունաբերության աշխարհագրությունը ներառում էր Երևան, Լենինական, Կիրովական, Հրազդան, Չարենցավան, Արթիկ և այլ քաղաքները: / Նշել առնվազն երեք քաղաքի անուն/:
2. Արփա-Սևան ջրատար թունելը կառուցվել է 1981 թ.:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Մեկնաբանել, որ Խորհրդային Հայաստանի տնտեսության զարգացման համար քայլեր ձեռնարկվեցին տնտեսությունը խաղաղ ժամանակների պահանջներին համապատասխան վերակառուցելու ուղղությամբ: Նախատեսվում էր հին արդյունաբերական ձեռնարկությունների վերակառուցմանը զուգահեռ նորերի կառուցումը: /Նշել առնվազն մեկ փաստ/:
2. Բացատրել, որ գյուղատնտեսությունը վերականգնելու նպատակով պետությունը ավելացնում էր դաշտերում աշխատող մեքենաների թիվը, ցանքատարածությունների ոռոգման համար կառուցվում էին ջրամբարներ և ջրանցքներ: /Նշել առնվազն մեկ փաստ/:
3. Պարզաբանել, որ բնակչության սոցիալական վիճակը կարգավորելու համար ԽՍՀՄ-ում ընդունվեց օրենք թոշակների մասին և բարձրացվեցին աշխատավարձները: /Նշել առնվազն մեկ փաստ/:

Դաս 2.Հասարակական –քաղաքական կյանքը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Ո՞ր թվականներին է Հայաստանում կիրառվել զանգվածային բռնաճնշումներ:
2. Ե՞րբ խորհրդային իշխանությունների կողմից կազմակերպվեց հայ բնակչության զանգվածային արտաքսում և ո՞րն էր նրանց աքսորավայրը:
3. Ո՞ր թվականներն են հայտնի <<ձնհալի տարիներ>> անվամբ:
4. Ի՞նչ կարևոր քայլեր ձեռնարկվեցին 1960-ական թթ. ազգային զարթոնքի ընթացքում:
5. Ու՞մ կառավարման տարիներն են հայտնի <<լճացման տարիներ>> անունով:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1.1930-ական և 1940-ական թվականներին Հայաստանում տեղի են ունեցել զանգվածային բռնաճնշումներ:
2.Հայ բնակչության զանգվածային արտաքսումը դեպի Ալթայի երկրամաս տեղի է ունեցել 1949 թ.:
3.1953 -1964թթ.-ը հայտնի են <<ձնհալի տարիներ>> անվամբ:
4.Լեոնիդ Բրեժնևի կառավարման տարիները հայտնի են <<լճացման տարիներ>> անունով:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ 1940-ական թվականներին 1930-ական թթ. համեմատությամբ բռնաճնշումները նվազել էին, սակայն դեռ իսպառ չէին դադարել :
2.Մեկնաբանել, որ 1953 -1964թթ-ը անվանում էին <<ձնհալի տարիներ>>, քանի որ խորհրդային հասարակության կյանքում այդ տարիներին լուրջ դրական փոփոխություններ արձանագրվեցին:
3.Պարզաբանել, որ ազգային զարթոնքի օրերին ամենակարևոր իրադարձությունները 1965թ. Հայոց մեծ եղեռնի 50-րդ տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպումն էր և հայ ժողովրդի այդ մեծ ողբերգության առաջին պաշտոնական ոգեկոչումը:

Թեմա 11

Հայկական Սփյուռքը հետպատերազմյան շրջանում

Դաս 1.Սփյուռքը և Խորհրդային Հայաստանի նոր քաղաքականությունը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Ինչո՞ւ հնարավոր դարձավ Հայկական հարցի վերաբացումը 1940-ական թթ. կեսերին:
2. Ե՞րբ կազմակերպվեց մեծ հայրենադարձությունը:
3. Քանի՞ երկրներից, որքա՞ն հայեր ներգաղթեցին Խորհրդային Հայաստան 1946-1948 թվականներին:
4. Ո՞ր շոգենավը 1946 թվականին Բաթումի նավահանգիստ հասցրեց հայրենադարձներին:
5. Ինչո՞ւ փոխվեց սփյուռքահայության վերաբերմունքը Խորհրդային Հայաստանի նկատմամբ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Մեծ հայրենադարձությունը կազմակերպվեց 1946-1948 թվականներին:
2. 1946-1948 թվականներին Խորհրդային Հայաստան ներգաղթեցին 90 000 հայեր՝ 12 երկրներից:
3.<<Տրանսիլվանիա>> շոգենավով 1946 թվականին հայրենադարձների առաջին խումբը հասավ Բաթում:

Առարկայի չափորոշիչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ 1940-ական թթ. կեսերին՝ երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո, Հայկական հարցի վերաբացումը հնարավոր դարձավ, քանի որ Խորհրդային Միությունը նպատակ ուներ

վերատիրանալ հայկական տարածքներին /Կարս, Արդահան/: Այդ նպատակի իրականացման համար մշակվել էր հատուկ ծրագիր, որում որոշակի դեր էր տրվել նաև Սփյուռքին:

2. Առանձնացնել 2-3 երկրների անվանումներ /Լիբանան, Սիրիա, Հունաստան/ որտեղից կազմակերպվեց հայրենադարձություն:
3. Բացատրել, որ Խորհրդային Հայաստանի նկատմամբ սփյուռքահայության վերաբերմունքի փոփոխության հիմնական պատճառն այն էր, որ Հայաստան ներգաղթած հայության հանդեպ սկսվեցին բռնաճնշումներ, դեռ ավելին՝ ներգաղթողների մեծ մասը աքսորվեցին:
4. Քարտեզի վրա ցույց տալ Լիբանանը և Բաթումի քաղաքը :

Դաս 1-2. Սփյուռքը և Խորհրդային Հայաստանի նոր քաղաքականությունը Սփյուռքի հանդեպ

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Միջազգային ո՞ր կազմակերպությունների կողմից և ե՞րբ Օսմանյան կայսրության կողմից 1915 թվականի կազմակերպած հայերի ջարդերը, դատապարտվեց և որակվեց որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն:
2. 1964 թվականին հայրենիք-սփյուռք կապը ամրապնդելու համար ի՞նչ կոմիտե ստեղծվեց:
3. 1988 թվականի Սպիտակի երկրաշարժի ժամանակ ի՞նչ գործունեություն ծավալեց Սփյուռքը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 1974 թվականին ՄԱԿ-ը 1915 թվականի Օսմանյան կայսրության կազմակերպած հայերի ջարդերը որակեց որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն:
2. 1987 թվականին Եվրախորհրդարանը դատապարտեց հայերի ցեղասպանությունը:
3. 1964 թվականին հայրենիք-սփյուռք կապը ամրապնդելու համար ստեղծվեց Սփյուռքահայության հետ կապի կոմիտե:
4. Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի և Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսի գաղթօջախներում կազմակերպած հանգանակությունը աղետի գոտու վերականգնման համար:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Ցույց տալ երկու միջազգային կազմակերպություններ /ՄԱԿ, Եվրախորհուրդ/ որոնք դատապարտել են Հայոց ցեղասպանությունը:
2. Արժևորել այն հանգամանքը, որ 1988 թվականի Սպիտակի երկրաշարժի օրերին սփյուռքահայությունը նյութական և բարոյական մեծ օժանդակություն ցուցաբերեց Հայաստանին: Նրանցից շատերը՝ բժիշկներ, հոգեբաններ, շինարարներ, ճարտարապետներ մնացին Հայաստանում և անմիջականորեն մասնակցեցին փրկարարական ու վերականգնողական աշխատանքներին:
3. Համապատասխանեցնել.

1964թ.		Սպիտակի երկրաշարժ
1974թ.		Ստեղծվեց Սփյուռքահայության հետ կապի կոմիտե

1988թ.		ՄԱԿ-ը 1915 թվականի Օսմանյան կայսրության կազմակերպած հայերի ջարդերը որակեց որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն

Թեմա 13

Վերակառուցման քաղաքականությունը,Արցախյան շարժումը

Դաս1.Վերակառուցումն ու Արցախյան պատերազմի սկիզբը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Ե՞րբ և ու՞մ կողմից սկսվեց վերակառուցման քաղաքականությունը:
2. Ի՞նչ է <<վերակառուցում>>-ը:
2. Ե՞րբ սկսվեց Արցախյան շարժումը:
3. Ովքե՞ր կազմակերպեցին Սումգայիթյան ողբերգությունը և ինչո՞ւ:
4. Ո՞վ էր Իգոր Մուրադյանը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1 1985 թ. Մ. Գորբաչովը դարձավ ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար և ընտրեց սոցիալիզմի կատարելագործման նոր ուղի, որը ստացավ <<վերակառուցում>> անվանումը:

2.Սումգայիթյան ողբերգությունը կազմակերպվել էր 1988 թ. փետրվարին՝ Ադրբեջանի տեղական իշխանությունների և ԽՍՀՄ վերնախավի գիտությամբ՝ Արցախի հիմնախնդիրի լուծումը կանխելու համար:

3.Արցախյան շարժումը ղեկավարելու և կազմակերպված հունի մեջ դնելու համար Իգոր Մուրադյանը 1988 թվականի փետրվարի 22-ին ստեղծում է <<Ղարաբաղ>> կոմիտեն:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ վերակառուցման քաղաքականությունը անհրաշեշտ էր, քանի որ ԽՍՀՄ-ը 1980-ական թթ. առաջին կեսին իր զարգացման մակարդակով մեծ չափերով հետ էր մնում Արևմուտքի երկրներից, ուստի անհրաժեշտ էր բարեփոխել վարչահրամայական տարաձևը:
2. Բացատրել, որ Գորբաչովի վերակառուցման քաղաքականությունը արցախահայերին ավելի համարձակ դարձրեց և 1988 թվականի փետրվարի 20-ին հրավիրվեց ԼՂԻՄ մարզխորհրդի նիստ, որը կայացրեց պատմական որոշում՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից հանել և միվորել ՀԽՍՀ-ի հետ, որով սկիզբ դրվեց Արցախյան շարժմանը:
3. Քարտեզի վրա ցույց տալ ՀՀ-ն, Արցախը , Ադրբեջանը:
4. Կարողանա հայոց պատմության մեջ գտնել նույնանման երևույթ՝ ինչպիսին էր Սումգայիթյան ողբերգությունը:
5. Արտահայտել կարծիք Արցախյան շարժման մասին:

Դաս 2.Ազատագրական շարժման վերելքը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1.<<Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը կարող է լուծել միայն Լեռնային Ղարաբաղի բնակիչը>>. ե՞րբ, որտե՞ղ և ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:
2. 1988-1991թթ. որքա՞ն հայեր բռնագաղթեցին Ադրբեջանից:
3. <<Հայոց Համազգային Շարժումը՝ ՀՀՇ-ն, ի՞նչ նպատակ էր դրել իր առաջ:
4. Երբ՞ է տեղի ունեցել Սպիտակի երկրաշարժը:
5. Ո՞վ է Շարլ Ազնավուրը, ի՞նչ գործունեություն ծավալեց երկրաշարժից հետո:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. <<Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը կարող է լուծել միայն Լեռնային Ղարաբաղի բնակիչը>> խոսքերի հեղինակը ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար Հենրիխ Պողոսյաննն է:
2. Ընդհանուր առմամբ 1988-1991 թթ. Ադրբեջանից բռնագաղթել է շուրջ 400 000 հայ:
3. ՀՀՇ-ն իր հիմնական նպատակն էր համարում Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանին:
4. Սպիտակի երկրաշարժը տեղի է ունեցել 1988 թ. դեկտեմբերի 7-ին:

Ֆրանսահայ հայտնի երգիչ Շարլ Ազնավուրը հումանիտար օգնություն բերեց Հայաստան, սրտառուչ խմբերգով փորձեց թեթևացնել աղետյալ մարդկանց վիշտը, մեծ եռանդով շարունակեց օգնություն կազմակերպելու իր ազգանվեր գործունեությունը նաև հետագայում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Քարտեզի վրա ցույց տալ Սումգայիթ, Բաքու, Կիրովաբադ /Գյանջա/ քաղաքները:
2. Բացատրել հայերի նկատմամբ ադրբեջանցիների վերաբերմունքը և հակառակը:

Դաս 1.Պայքար Հայաստանի անկախացման համար

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Ի՞նչ արդյունք արձանագրվեց 1990 թ. գարնանը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի այլընտրանքային առաջին ընտրություններից:
2. Ո՞վ ընտրվեց ԳԽ-ի նախագահ:
3. Ե՞րբ ընդունվեց Հայաստանի անկախությոն հռչակագիրը:
4 . Ինչ է <<Կոլցո>> /<<Օղակ>>/ ռազմական գործողությունը:
5. Ո՞վ է Թաթուլ Կրպեյանը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 1990 թ. մայիսի 20-ին կայացավ ընտրություններ և ձայները գրեթե հավասարաչափ բաշխվեցին ՀՀՇ-ի և Հայկոմկուսի միջև:

2. 1990 թ. օգոստոսի 4-ին Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը:
3. 1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը ընդունեց <<Հռչակագիր Հայաստանի անկախության մասին>> փաստաթուղթը:
4. 1991թ. ապրիլ-մայիս ամիսներին Ադրբեջանը բացահայտ պատերազմ սկսեց Շահումյանի շրջանի և Գետաշենի հայ բնակչության դեմ, իրականացնելով նախօրոք մշակված <<Կոլցո>> /<<Օղակ>>/ ռազմական գործողությունը: /Նշել առնվազն մեկ գյուղի անուն/:
5. Գետաշենի հերոսական պայքարը ղեկավարում էր Թաթուլ Կրպեյանը, ով անհավասար մարտում հերոսաբար զոհվեց և հետմահու արժանացավ Հայաստանի ազգային հերոս կոչման :

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Կարծիք հայտնել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1990 թ. մայիսյան ընտրությունների մասին և համեմատել մայիսյան ընտրությունները նախորդ բոլոր ընտրությունների հետ, փաստել, որ հայ ժողովուրդը երկու տարվա արցախյան ազատագրական ծանր ու հետևողական պայքարում չկորցրեց իր ողջամտությունը և դուրս չեկավ պայքարի սահմանադրական շրջանակներից:
2. Քարտեզի վրա ցույց տալ Գետաշենը և Շահումյանի շրջանը:
3. Արժևորել Թ. Կրպեյանի և Արցախյան ազատամարտի մյուս հերոսների կատարած հայրենանվեր գործունեությունը:
4. Համապատասխանեցնել.

1	1990 թ. մայիսի 20	1	ՀՀՇ վարչության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը ընտրվեց Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ
2	1990թ. օգոստոսի 4	2	ԳԽ-ն ընդունեց <<Հռչակագիր Հայաստանի անկախության մասին>>
3	1990թ. օգոստոսի 23	3	Հայաստանի Գերագույն խորհրդի այլընտրանքային ընտրություն

Թեմա 15

Խորհրդային Հայաստանի և Հայկական սփյուռքի մշակույթը 1945-1991թթ.

Դաս 1. Կրթությունը և գիտությունը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Կրթական ի՞նչ համակարգ է գործում ՀԽՍՀ-ում:
2. Ի՞նչ գիտեք 1985-1986 ուստարում ուսանողների թվի և բուհական կրթության մասին:
3. Գիտության ո՞ր բնագավառները զարգացան:
4. Ե՞րբ է Վիկտոր Համբարձումյանը ընտրվել գիտությունների ակադեմիայի նախագահ:
5. Խորհրդահայ գիտության ի՞նչ նշանավոր ներկայացուցիչներ գիտեք:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. .ՀԽՍՀ-ի կրթական համակարգը հետևյալն էր. պարտադիր միջնակարգ, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն բուհական:

2. 1985-1986 ուստարում ՀԽՍՀ-ում գործող բուհերի թիվը աճեց, բարձրագույն կրթության համակարգը զարգացավ և ուսանողների թիվը հասավ 55 հազարի:
3. Զարգացան գիտության հետևյալ բնագավառները. աստղաֆիզիկան, մաթեմատիկան, քիմիան, պատմագիտությունը և այլն:/Նշել առնվազն երկուսը/:
4. Վիկտոր Համբարձումյանը Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ է ընտրվել 1947 թ.:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել խորհրդահայ գիտության նշանավոր ներկայացուցիչների. Վիկտոր Համբարձումյան, Արտեմ Ալիխանյան, Աշոտ Հովհաննիսյան և այլոք: / Թվարկել առնվազն երկու գործչի անուն/:
2. Բնութագրել Վիկտոր Համբարձումյանի ներդրումը աստղաֆիզիկայի բնագավառում:

Դաս 2.3.Գրականությունը և արվեստը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Խորհրդահայ և սփյուռքահայ գրականության նշանավոր ի՞նչ ներկայացուցիչներ գիտեք:
2. Նշանավոր ի՞նչ ազգային ինքնատիպ կառույցներ կառուցվեցին Երևանում:
3. 1960-1970-ական թթ. Խորհրդային Հայաստանում ի՞նչ կինոնկարներ ստեղծվեցին:
4. Սփյուռքահայ կերպարվեստի ի՞նչ նշանավոր ներկայացուցիչներ գիտեք:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Խորհրդահայ ճարտարապետության ազգային ինքնատիպ կառույցներից են. Երևանում (Հրազդան մարզադաշտը, Զվարթնոց օդանավակայանը, Ծիծեռնակաբերդ հուշահամալիրը և այլն) : / Նշել առնվազն երեքը/:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել սփյուռքահայ գրականության նշանավոր ներկայացուցիչների. (Մուշեղ Իշխան, Վիլյամ Սարոյան, Անդրանիկ Ծառուկյան և այլն): /Թվարկել առնվազն մեկ գործչի անուն/:
2. Թվարկել խորհրդահայ գրականության նշանավոր ներկայացուցիչներից մի քանիսի անունները (Պարույր Սևակ, Սիլվա Կապուտիկյան, Վահագն Դավթյան): /Թվարկել առնվազն երեք գործչի անուն/:
3. Առանձնացնել 1960-1970-ական թվականներին նկարահանված գեղարվեստական արժեքները՝ << Բարև, ես եմ>>, << Եռանկյունի>>, << Նռան գույնը>> և այլ ֆիլմեր:
4. Թվարկել 20-րդ դարի սփյուռքահայ կերպարվեստի նշանավոր ներկայացուցիչների. Գառզու, Արշիլ Գորկի, Ժանսեմ:/ Թվարկել առնվազն մեկ գործչի անուն/:
5. Նկարներով ճանաչել առնվազն երկու մշակութային նշամավոր գործչի:
6. Արժևորել մշակույթի զարգացումը սփյուռքում և հայրենիքում:

Թեմա 16 Հայաստանի Հանրապետության ամրապնդման գործընթացը:
Թեմա 17 ՀՀ տնտեսական դրությունը:
Թեմա 18 Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը
Թեմա 19 Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետությունը
Դաս 1. Անկախ Հայաստանի Հանրապետության կերտումը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1.Ե՞րբ է անցկացվել ՀՀ անկախության հանրաքվեն:
2.Ո՞վ է ՀՀ առաջին նախագահը:
3.Ներկայացրե՛ք երրորդ հանրապետության խորհրդանիշները:
4. Ե՞րբ է ընդունվել ՀՀ Սահմանադրությունը:
5. Ե՞րբ է կազմավորվել Հայոց բանակը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. ՀՀ անկախությյան հանրաքվեն տեղի է ունեցել 1991թ. սեպտեմբերի 21-ին:
2.1991 թ. հոկտեմբերի նախագահական ընտրություններում ՀՀ առաջին նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը:
3.ՀՀ խորհրդանիշներն են. (եռագույն դրոշը, «Մեր հայրենիք» հիմնը, զինանշանը):
4.ՀՀ Սահմանադրությունը ընդունվել է 1995 թ. հուլիսի 5-ին:
5.Հայոց բանակը կազմավորվել է 1992 թ. հունվարի 28-ին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Կարծիք հայտնել ՀՀ անկախության հանրաքվեի, նախագահական ընտրությունների արդյունքների վերաբերյալ:
2. Արժևորել բանակի անհրաժեշտությունը (որպես անվտանգության երաշխիք):

Դաս 17.1 Հայաստանը տնտեսական վերափոխումների ճանապարհին

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար .

1. Ե՞րբ է ընդունվել << ՀՀ պետական սեփականության մասին>> օրենքը:
2. ՀՀ-ում գործող ի՞նչ կուսակցություններ գիտեք:
3. Ո՞ւմ նախաձեռնությամբ ի՞նչ բարեգործական կազմակերպություններ ստեղծվեցին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 1990թ. սեպտեմբերին ընդունվել է <<Հայաստանի Հանրապետության պետական սեփականության մասին>> օրենքը (ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների ունեցվածքը հանրապետության սեփականությունն է):

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ բարեգործական կազմակերպություններ ստեղծվեցին Մայր հայրենիքին աջակցելու նպատակով։

Թվարկել առնվազն երկու կուսակցություններ. ՀՅԴ, ՀՀԿ, ԼՀԿ, Բարգավաճ Հայաստան, Քաղաքացիական պայմանագիր։

Ցույց տալ, որ Մայր հայրենիքին աջակցելու նպատակով Ալեք Մանուկյանի և Քըրք Քըրքորյանի նախաձեռնությամբ ստեղծվեցին «Հայ բարեգործական ընդհանուր միություն», «Լինս»-ի հիմնադրամ բարեգործական կազմակերպությունները:

Դաս. 2 Հասարակական քաղաքական կյանքը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Ի՞նչ ներքաղաքական զարգացումներ տեղի ունեցան 1991-1998 թթ։
2. Ո՞վ դարձավ ՀՀ նախագահ 1998 թվականին։
3. 1999 թ. հոկտեմբերի 27-ի դեպքերը ի՞նչ հետևանքներ են ունեցել։
4. 2008 թ. տեղի ունեցած նախագահական ընտրությունների արդյունքում ո՞վ դարձավ ՀՀ երրորդ նախագահ:
5. Ի՞նչ գիտեք Հայաստանում տեղի ունեցած <<Թավշյա հեղափոխության>> մասին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 1998 թ. ՀՀ նախագահ դարձավ Ռոբերտ Քոչարյանը:
2. 1999 թ. հոկտեմբերի 27-ին զինված 5 ահաբեկիչներ ներխուժեցին խորհրդարան և ահաբեկչությանը զոհ գնացի 8 պետական գործիչներ (վարչապետ Վազգեն Սարգսյան, ՀՀ ԱԺ նախագահ Կարեն Դեմիրճյան) / Նշել առնվազն երկու գործչի անուն/:
3.2008 թ. ՀՀ երրորդ նախագահ ընտրվեց Սերժ Սարգսյանը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1.Ցույց տալ 1991-1998 թթ. ներքաղաքական զարգացումները. 1994 թ. ՀՅԴ գործունեությունը կասեցվեց, 1995 թ. անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ, 1996 թ. տեղի ունեցան նախագահական ընտրություններ, 1998 թ. կայացան արտահերթ նախագահական ընտրություններ:/ Նշել առնվազն մեկը/:
2.Կարողանա հաջորդաբար թվարկել ՀՀ երեք նախագահներին. Լևոն Տեր- Պետրոսյան, Ռոբերտ Քոչարյան, Սերժ Սարգսյան։

3. Վերաբերմունք արտահայտել 2018 թ տեղի ունեցած <<Թավշյա հեղափոխության>> և Նիկոլ Փաշինյանի գլխավորած <<Իմ քայլը>> շարժման հաղթանակի հետ կապված:

Դաս 2. Հասարակական - քաղաքական և մշակութայի կյանքը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1 Կրթական ի՞նչ համակարգ էր գործում բուհերում 1995 թ.:
2. Ի՞նչ բարեփոխումներ տեղի ունեցան հանրակրթությունում 2006 – 2017 թթ:
3. Երաժշտության բնագավառում ի՞նչ նշանավոր գործիչներ գիտեք :
4. Ո՞ր կազմակերպության կողմից Երևանը հայտարարվեց գրքի համաշխարհային մայրաքաղաք:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Բուհերում մտցվեց երկաստիճան կրթական համակարգ՝ բակալավրիատ և մագիստրատուրա:
2. 2006 թ. մտցվեց 12 – ամյա միջնակարգ կրթությունը, իսկ 2017 թ-ից այն դարձավ պարտադիր:
3. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 2012 թ. Երևանը հայտարարվեց գրքի համաշխարհային մայրաքաղաք:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել երաժշտության բնագավառի նշանավոր ներկայացուցիչների. Լորիս Ճգնավորյան, Օհան Դուրյան, Հովհաննես Չեքիջյան և այլք: /Թվարկել առնվազն երկու գործչի անուն/:
2. Կարծիք հայտնել կրթական համակարգում 2006-2017 թթ. տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ:
3. Արժևորել արվեստի գործիչների դերը հայ մշակույթի զարգացման գործում:

Դաս 1. Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչումը և արտաքին քաղաքականությունը Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար .

1. Ե՞րբ է ՀՀ- ն դարձել ՄԱԿ-ի անդամ:
2. Ո՞ր երկրների հետ ՀՀ - ն դիվանագիտական կապեր հաստատեց:
3. Ո՞ր թվականին Հայաստանը դարձավ ԵԽ լիիրավ անդամ:
4. Ո՞ր երկրները ընդունեցին Հայոց ցեղասպանությունը:
5. Ո՞վ էր «Ակոս» թերթի գլխավոր խմբագիրը, ով Ստամբուլում ահաբեկության զոհ դարձավ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. ՀՀ – ն ՄԱԿ-ի անդամ է դարձել 1992 թ.:
2. ՀՀ-ն դիվանագիտական կապեր հաստատեց Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, ԱՄՆ-ի, Իրանի և այլ երկրների հետ: /Թվարկել առնվազն երկուսը/:
3. 2001թ. Հայաստանը դարձավ ԵԽ լիիրավ անդամ:
4. «Ակոս» թերթի գլխավոր խմբագիրը Հրանտ Դինքն էր:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Արժևորել ՀՀ միջազգային ճանաչումը , հարաբերությունները ԱՊՀ երկրների և հատկապես ՌԴ-ի հետ:
2. Քարտեզի վրա ցույց տալ Հայոց ցեղասպանությունը ճանաչած առնվազն երեք երկիր.Ռուսաստան, Ֆրանսիա, Գերմանիա:

Դաս 19.1. Հանրապետության պետականության կայացման գործընթացը
19.2. Հանրապետության ներքին դրությունը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Ե՞րբ է անցկացվել ԼՂՀ անկախության հանրաքվեն:
2. Ի՞նչ գիտեք ԼՂՀ իշխանության մարմինների մասին:
3 Ե՞րբ ազատագրվեց Շուշին :
4. Ե՞րբ և ու՞մ միջնորդությամբ կնքվեց հայ - ադրբեջանական զինադադարը:
5. Արցախյան հիմնախնդիրը լուծելու նպատակով ի՞նչ միջազգային կառույց ստեղծվեց:
6. Արցախյան ազատամարտի ինչ նշանավոր հերոսներ գիտեք:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 1991թ. դեկտեմբերին անցկացվել է ԼՂՀ-ի անկախության հանրաքվեն:
2.ԼՂՀ-ի իշխանության մարմիներն են. օրենսդիր, գործադիր, դատական:
3. Շուշին ազատագրվեց 1992 թ. մայիսի 9-ին:
4.Զինադադարը կնքվեց 1994 թ. մայիսի 12-ին:
5. Արցախյան հիմնախնդիրը լուծելու նպատակով ստեղծվեց Մինսկի խումբը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Պարզաբանել 1992 թ. մայիսի 9-ին Արկադի Տեր- Թադևոսյանի , Գուրգեն Դարիբալթայանի հրամանատարությամբ Շուշիի ազատագրման <<Հարսանիք լեռներում>> գաղտնի ծրագրի մշակումը և իրականացումը:
2. Թվարկել Արցխյան ազատամարի և Ապրիլյան քառօրյա պատերազմի հերոսներից մի քանիսին (Աշոտ Ղուլյան, Մոնթե Մելքոնյան, Ռոբերտ Աբաջյան և այլք):

Թեմա 20

Հայկական սփյուռքը 1991 թվականից մինչև մեր օրերը

Դաս 1-2. Ժամանակակից Սփյուռքը: Սփյուռք – հայրենիք հարաբերությունները

[Թեմատիկ պլան]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար.

1. Սփյուռքահայ գաղթօջախներով հայտնի ի՞նչ երկրներ գիտեք:
2. Զանգվածային արտագաղթի հետևանքով նախկին ԽՍՀՄ հանրապետություններից որտե՞ղ է կենտրոնացել հայերի ճնշող մեծամասնությունը:
3. Ինչո՞վ էր պայմանավորված Հայաստան – Սփյուռք կապերի ամրապնդումը անկախացումից հետո:
4. Ե՞րբ է ստեղծվել <<Հայաստան>> համահայկական հիմնադրամը և ի՞նչ գործառույթ էր կատարում:
5. Սփյուռքի հետ հարաբերությունները սերտացնելու ուղղությամբ ի՞նչ միջոցառումներ է ձեռնարկել ՀՀ-ն:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1.Սփյուռքահայ հայահոծ կենտրոններից են Ռուսաստանը, ԱՄՆ-ն, ֆրանսիան, Վրաստանը և այլն: / Նշել առնվազն երկու երկիր/:
2.Զանգվածային արտագաղթի պատճառով նախկին ԽՍՀՄ հանրապետություններից Ռուսաստանում է կենտրոնացել հայերի ճնշող մեծամասնությունը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Քարտեզի վրա ցույց տալ առնվազն երկու սփյուռքահայ գաղթօջախներով հայտնի երկրներ (Ռուսաստան, ԱՄՆ, Վրաստան և այլն):
2.Բացատրել, որ Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդումը պայմանավորված էր Հայաստանի անկախացմամբ և հայրենիքում սփյուռքյան համապատասխան հաստատությունների ազատ գործունեությամբ:
3.Պարզաբանել, որ <<Հայաստան>> համահայկական հիմնադրամը ստեղծվել է 1992 թ., որը կազմակերպում և համակարգում էր Սփյուռքի կողմից ՀՀ սոցիալ-տնտեսական մի շարք խնդիրներ լուծելու նպատակով Հայաստանին ցուցաբերվող օգնությունը:
4.Բացատրել, որ Հայաստան-Սփյուռք հարաբերությունները սերտացնելու ուղղությամբ ՀՀ իշխանությունների կողմից կարևոր քայլերից էին <<Հայաստան-Սփյուռք>> համահայկական խորհրդաժողովների նախաձեռնումը, 2008թ. Սփյուռքի նախարարության ստեղծումը և այլն:/ Նշել առնվազն մեկը/: